«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2021 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1734-Ն ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1489-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների և հիմք ընդունելով «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը, 16-րդ հոդվածի 1-ին, 19-րդ հոդվածի 2-րդ, 21-րդ հոդվածի 2-րդ, 23-րդ հոդվածի 2-րդ մասը, «Պետական նպաստների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Հիմնական կենսաթոշակի, նվազագույն կենսաթոշակի և թաղման նպաստի չափերը, ստաժի մեկ տարվա արժեքը, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողների հաշմանդամության և նրանց ընտանիքների անդամների կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակների չափերը սահմանելու մասին» N 1734-Ն որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 5-րդ ենթակետի «ա» պարբերությունում «40000» թիվը փոխարինել «43000» թվով, «բ» պարբերությունում «30000» թիվը փոխարինել «33000» թվով, «գ» պարբերությունում «27000» թիվը փոխարինել «30000» թվով,
- 6-րդ ենթակետում «27000» թիվը փոխարինել «30000» թվով,
- 7-րդ և 8-րդ ենթակետերում «26500» թիվը փոխարինել «28600» թվով։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի «Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքումնպաստների և թաղման նպաստի չափերը սահմանելու մասին» N 1489-Ն որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին և 3-րդ ենթակետերում «26500» թիվը փոխարինել «28600» թվով,

2) 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հաշմանդամության նպաստի չափերը՝

ա. առաջին խմբի հաշմանդամի համար՝ 28600 դրամ.

բ. երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 28600 դրամ.

գ. երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 28600 դրամ.

դ. հաշմանդամ երեխա ճանաչված անձի համար՝ 37000 դրամ.»,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: